

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր**

ԵՐՈՍԱՊԷՏ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1978

Ն. Ս. Օժուժիկն Տ. Տ. Վազգէն Ա.

Գաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօներու բարեբաստիկ առիթներով, խոնարհարար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օժուժեան մեր և Ս. Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւարութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծով որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ անսասնութիւն և բարգաւաճում:

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԿ

ԵՐՈՍԱՊԷՏ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1978

Նորին Սրբութիւն

Յովհաննէս-Պօղոս Բ. Պապ

Վատիկան

Ս. Ծննդեան և Նոր Տարւոյ բարեբաստիկ առիթներով, յարգանք կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւարութիւնները, մաղթելով Ձեզ շարունակական առողջութիւն և Ձեր մեծ Եկեղեցիին՝ բարգաւաճում: Թող Ամենակարողն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բարի ջանքերն ու ծրագրները:

ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղեմի

ԵՐՈՍԱՊԷՏ, 21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1978

Նորին Սրբութիւն Պիժէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկուա

Ս. Ծննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և ջերմ շնորհաւարութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐԳԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պատրիարք Հայ Երուսաղեմի

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Գ - Բ Ե Մ Ո Կ Ա Ն Գ

● Եր. 2 Սեպտ. — Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամաբարն էր նորըն- ծաներուն ուսուցիչն ու վարժիչը՝ Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան, որուն կը սպասար- կէին նորընծայ երեք արեղանները:

● Կիր. 3 Սեպտ. — Ը. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան Երաշխաւոր Ս. Աստուա- ժածին մատրան մէջ: Ժամաբարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Իսախանութեան:

● Բշ. 4 Սեպտ. — Թ. օր Վերափոխման: Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպոսի Գարեկեան:

● Գշ. 5 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յով- սեփի գերեզմանին վրայ: Ժամաբարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևակ Վրդ. Ղարիպեան: Երթաւզարձի թափօրները գլխաւորեց Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան:

● Եր. 9 Սեպտ. — Ս. Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամաբարն էր նորըն- ծայ Տ. Հայրիկ Արեղայի ուսուցիչն ու վար- ժիչը՝ Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան, որ- ընուն կը սպասարկէր նորընծան:

— Մայր Տաճարին մէջ պաշտուած նախա- տեսակին նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպոս:

● Կիր. 10 Սեպտ. — Կիւս Գոսոյ Ս. Աստու- ժածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթե- մանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տի- բրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան: Երթ- ու գարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Կիրեղ Եպոս. Գարեկեան:

● Եր. 16 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ժովովոյն (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր ժամաբարն էր Հոգշ. Տ. Թուրքն Վրդ. Յովա- կիմեան:

● Կիր. 17 Սեպտ. — Բարեկեղան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնամատրան մէջ: Ժամա- բարն էր Հոգշ. Տ. Ռեհի Արղ. Որդիքեան:

● Գշ. 20 Սեպտ. — Ս. Կոյսի Եննդեան տօնի հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպոս. Գարեկեան:

● Եշ. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի: Աւաւտուան, Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր Ինքնա- շարժերով մեկնեցան Գեթեմանիի ձորը ու

ւերաշափառով մուտք գործեցին Ս. Աստու- ծածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մա- տոյց և աւաւր պատշաճի քարոզեց Գերշ. Հան- դիսապետ Սրբազանը:

● Եր. 13 Սեպտ. — Տօն Եկեղեցւոյ ի Նաւակա- ռիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր ժամաբարն էր Հոգշ. Տ. Բար- դէն Արեղայ Անուշեան:

— Իսալվերացի մեծահանդէս նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագա- հութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արեղայի սրբապետի՝ սր պապ Ս. Իսալափայտի մատուցը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան: — Գլխաւորակիցներն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Եկեղեցէի և Հոյկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Կիր. 24 Սեպտ. — Տօն ՎԵՐԱՏՄԱՆ ՍՐՈՑ ԽԱՉԻՆ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արեղայ. Անուշեան: Երգեցողութիւնները կատարուե- ցան երկսեռ երգչախումբի կողմէ, ղեկավա- րութեամբ Ս. Աթոռոյ բաղամտայ Գարապետ Տիար Սահակ Գալայեանին Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցան հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտուանք՝ ազգիւ և Ս. Աթոռոյ քարե- բարներ կարապետ և Գրիգոր Մելքոնեան եղ- յարյուններ հոգեհանգստեան համար: Հանդիսա- պետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպոս. Գարեկեան:

— Կէտրէ ետք, Մայր Տաճարին մէջ կա- տարուեցաւ Իսալվերացի մեծահանդէս Ան- դառատանը, հանդիսապետութեամբ Լուսարա- րապետ Գերշ. Տ. Հայրիկ Արեղայի սրբապետի:

● Բշ. 25 Սեպտ. — Յիւսակ մեկնոց: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատրան մէջ պատարա- ղեց Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալայեան: Ապա, Գերշ. Տ. Կիրեղ Եպոսի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, թէ՛ Մայր Տաճարին մէջ և թէ՛ գաւիթը՝ Երանա- շնորհ Տ. Կիրեղ Բ. Գարշ. Հօր շիրմին վրայ:

● Եր. 30 Սեպտ. — Տօն Խաչի: Ս. Պատա- րագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամաբարն էր Հոգշ. Տ. Ռեհի Արեղայ Որդիքեան:

● Կիր. 1 Հոկտ. — Բարեկեղան Վարապայ Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնամատրան մէջ: Ժամա- բարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանուսարեան:

● Ռւր. 6 Հոկտ. — Նախատեսակը պաշտու- ւեցաւ Դպոսեց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հան- դիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եր. 7 Հոկտ. — Ս. Գեորգ զօրավարին: Աւաւտուան, Գերշ. Տ. Կիրեղ Եպոս. Գարեկե- անի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր մեկնեցան Դպոսց Ս. Գեորգայ վանքը, որու եկեղեցիին մէջ Ս. Պատարագը մատոյց Հոգշ.

Տ. Բարգէն Արզ. Անուշեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեկանդատեան պաշտօնի նորոգ գիտնանեալ Տ. Գեորգ Վրդ. նազարեանի մահուան ութօրէքէն և անուան տօնին առիթներով: Ապա Միաբանութիւնը պատուապիբուեցաւ Վանքի Տեառնաբնէ՛ր: Դպտոց եպիսկոպոսի փոխանորդ շոր հոյժէ:

— Գէօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս: Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարքափառնով մուտք գործեց Ս. Յատութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատարան մէջ: Ապա կատարուեցաւ Տեօրինական Սրբապետեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր շաղշ. Տ. Հայրիկ Արզ. Գալաշեան:

● Կիր. 8 Նոպտ. — Տոմ Վարդայ Ս. Խային: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատարան մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Գրիտառօս Ս. Գերեզմանին վրայ, քարոզեց՝ Խաչի տօնեքու մասին, մատնանշելով օրուան տօնը իբրև զուտ ազգային խաչի տօն, և Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Գերեզմանին դիմաց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Ի օծման 23րդ և ծննդեան 70րդ տարեդարձերու առթիւ կատարուած շաղապետական Մաղթանքին:

● Եր. 14 Նոպտ. — Մ. 72 աւալեռացի Գրիտառօս: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ս. Գեորգայ սեղանին վրայ: Ժամարարն էր շաղշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Կիր. 15 Նոպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր շաղշ. Տ. Մանուէլ Արզ. Երկաթեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեկանդատեան պաշտօն Ս. Աթոռոյ Միաբան հանգ. Տ. Կորիւն Մ. Վրդ. Մանուէլեանի մահուան քառասունքին առթիւ, նախագահութեամբ հանդիսաւոր Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս: Գարիկեանի ներկայ էին Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արևելեան և Արևմտեան (Բալիֆորնիոյ) Թեմերու Սրբապետ Առաջնորդները՝ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպոս Մանուկեան և Գերշ. Տ. Վաչէ Արքեպոս Ծովուփեան, որանք Ս. Էլմիածնէ վերագարծին Կիրարար այցելած էին Ս. Աթոռ:

— Այսօր տեղի ունեցաւ Թեմէի Ս. Գեորգայ վանքի տարեկան ուխտադասցութիւնը: Հաջառակ գաւառեան զէմ տեղացոյ եղանակին առաջին անձրին և Հրէական Սուքքօթի նախօրեակէն պատճառուած երթևեկի խնդրանքին, բաւական ժողովուրդ փութեցանք իր իր բարեպաշտական զբոսցումները արտաքայտելու Գրիտառօսական Եկեղեցւոյ ամենէն ժողովրդականացած սուրբերէն մէկուն յիշատակ տօնին ագիթով: Ս. Պատարագը մատ

տոյց շաղշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան: Տեղւոյն հովիւ շաղշ. Տ. Նուբէն Վրդ. Մանուկեան նախագահեց հանդիսութեանց:

● Ուր. 20 Նոպտ. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յարիբ նախագահեց Գերշ. Տ. Տանէ Արքեպոս Անէմեան:

● Եր. 21 Նոպտ. — Ս. Թարգմանչաց վարդապետաց մերց (Տօմ ազգային եւ եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց շաղշ. Տ. Հայրիկ Արզ. Գալաշեան: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեկանդատեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ և ազգիս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Գէյ Կիւրեղեկեանի, տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար: Արարութեան նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս: Գարիկեան:

● Կիր. 22 Նոպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր շաղշ. Տ. Ռուբէն Արզիքեան:

● Եր. 28 Նոպտ. — Ս. Զարից Աւետարանացի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիբ և այ Ս. Յարութեան գաւթի Ս. Յովի. Աւետարանչի մատարան մէջ, ինչպէս էր պարագան Տաճարի նորոգութեանց սկսելէ առաջ: Ժամարարն էր շաղշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

● Կիր. 29 Նոպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատարան մէջ: Ժամարարն էր շաղշ. Տ. Բարգէն Արզ. Անուշեան: Հանդիսաւոր Գերշ. Տ. Տանէ Արքեպոս քարոզեց ճշաւուն Գիրքէն ետք, յիւթ ունենալով Աստուծոյ հայրութեան և մարդոց որդիութեան գաղափարը:

● Բշ. 30 Նոպտ. — Ս. Յովսէփայ Ասուածաբոց: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմեանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ շաղշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

● Եր. 4 Եոյմ. — Ս. Երկոստան վարդապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլ խաղիբ: Ժամարարն էր շաղշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Կէտե՛ք ետք, վաղուան Գիւտ Խաչի տօնին առիթով, Ամեն Ս. Պատրիարք շոր գըլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարքափառնով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնոյ կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորի եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տեօրինական Սրբապայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր շաղշ. Տ. Մանուէլ Արզիպոս:

Հստ տեղի է յիշել թէ Ս. Լուսաւորի և Կեղեղեղայ տաճարը զարդարուեցաւ Հայ Զարտարապետութեան գլուխգործոց հայրենական մեր վանքերու ու տաճարներու մոզայիկի

գեղաքանդակ մօրթներով, իսկ ձեռքներն էլ կախուցեցաւ բերքեղեայ նոր ու մեծ լահ մը:

● Կիր. 5 Նոյմ. — Գիւս Խաչի: Գրեշերային հ առաւօտեան ժամերգութիւններէ պաշտօնեցան Ս. Յարութեան Տաճարի Ս. Գր. Լուսառաբէլ եկեղեցին մէջ, ուր ի մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մասնուէլ Արղ. Երկաթեան: Ապա, Ամեն. Ս. Պատարագը Հօր Ղլխաւորութեամբ, ամբողջ Միաբանութիւնը զգեստաւորեալ իջաւ Խաչգիւտի այրը, ուր կատարուած Ս. Անտարանի ընթերցումէ ետք թափօրը բարձրացաւ Ս. Գերեզմանին շրջափակը, երիցք գառնաւով Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանաեղևոյն շուրջ: Նորին Ամենապատուութիւնը, Կենաց Փայտի մատունքն ի ձեռին եւ ամպնալանի շերքէ, կ'որհնէր Տաճարը լեցնելու հոծ ժողովօրդը: Ս. Գերեզմանի զբան կարգէն ետք երգուեցաւ Բոաչի քո Քրիստոս եւ կատարուեցաւ խնկարկութիւն: Թափօրը վերջացաւ Ս. Լուսառաբէլ եկեղեցւոյ մէջ, որով եւ փակուեցաւ տարեկան հանդիսութեանը շարքը համաքրիստոնէական Տաճարին ներքո:

● Եր. 11 Նոյմ. — Ս. Յովնանու Ոսկեքեմը հայրապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխաղբի մատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Լայրիկ Արղ. Գալայեան:

● Կիր. 12 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարեկ Արեղայ Փաշէմտեբեան: Ս. Պատարագին ետք, Գերշ. Տ. Կիրեղ Եպո. Գարեկեանի Ղլխաւորութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս հանգուցեալ Միաբաններէն Տ. Գեորգ Վրդ. Նազարեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առիթով:

● Ուր. 17 Նոյմ. — Ս. Լրեշտակապետաց նախատօնակը պաշտուեցաւ համանուն վանքի եկեղեցւոյն մէջ: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպո. Գարեկեան:

● Եր. 18 Նոյմ. — Տօնու Արեւակապետաց Գարեիկի Աստուծայի: Առաւօտեան ժամերգութեան պաշտուեցաւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ուիկ Արղ. Որդիբեան: Ս. Պատարագին ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ազգային բարեբերութիւն Աղանի ձեկնակրեանի եւ պարտալից հոգիներուն համար: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպո. Կարեկեան: Ապա Միաբանութիւնը պատուաբարուեցաւ Վանաց Տեալարանի՝ Տեպուշ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Լարեկեանի կողմէ:

● Կիր. 19 Նոյմ. — Այսօր էս Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Լրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ըստ սովորութեան, պատարագարին էր Վանուց Տեալուշ՝ Հոգշ. Տ. Սեան Վրդ. Լարեկեան:

● Եր. 25 Նոյմ. — Ս. Առաքիլաց Բնդրէի եւ

Փրիլպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաղբի մատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարեկ Արղ. Անուշեան:

● Կիր. 26 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բուբէն Վրդ. Յովակիմեան:

● Եր. 2 Դեկտ. — Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Առաքեալ Արղ. Գալեան:

● Կիր. 3 Դեկտ. — Բարեկեղան Յիսակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Առաք Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

— Ս. Կոյրի Ընծայման հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Տանէ Արքեպո:

● Բշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Առաւմաճմնի: Առաւօտեան, Գերշ. Տ. Տանէ Արքեպո. Անժեանի Ղլխաւորութեամբ, Միաբան Լայրեր ինքնաշարժութիւնով մեկնեցան Գեթեմանի ձորը ու շարժուեցան մուտք գործեցին Ս. Առաւմաճման Տաճար, ուր Գերշ. Լանդիսապետ Սրբազանը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ եւ ապա նախազանգ, ընկալեալ սովորութեան համաձայն, Կիււղտի Կիւլպէնկեանի եւ Կիւլպէնկեան զերգատանի համայն նշեցեցեաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտուածներէն:

● Եր. 9 Դեկտ. — Ս. Գրիգորի Սնանկաղբի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Լայրիկ Արղ. Գալայեան:

● Կիր. 10 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարն մատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Լարեկեան:

● Ուր. 15 Դեկտ. — Առաքեալ Լուսառաբաց նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպո. Գարեկեան:

● Եր. 16 Դեկտ. — Ս. Առաքիլ եւ առաքին լուսառաբաց մերոց՝ Թաղեայի եւ Բարբաղիտայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշեան Վրդ. Չըլանեան:

● Կիր. 17 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բուբէն Վրդ. Յովակիմեան:

● Դշ. 20 Դեկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Լանդիսապետն էր Գերշ. Տ. Տանէ Արքեպո. Անժեանի:

● Դշ. 21 Դեկտ. — Տօն Ս. Լարցի Նոյնապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գրիգորի մատարն մէջ: Պատարագարին էր, ըստ սովորութեան, Խառատեանայրքը՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարեկեան:

— Ս. Կոյսի Յղութեան հանդիսաւոր նախա-
տանակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ:
Հանդիսապետն էր Գերբշ. Տ. Կիրեղ Յպո.:

● Աւր. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածած-
նի: Առաւօտուն, Գերբշ. Տ. Կիրեղ Յպո. Գա-
րիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր
ինքնաշարժերով մեկնեցան Գեթեանի ձորը
ու շրջափառուով մուտք գործեցին Ս. Աս-
տուածածնայ Տաճար, ուր Գերբշ. Հանդիսապետ
Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս.
Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ և
քարոզեց օրուան խորհուրդին շուրջ, յայտ-
նելով թէ մեր այ հաւատքով մատուցած բարի
ու բանաւոր խնդրանքները ընդունելի պիտի
ըլլան Տիրոջմէ, ինչպէս լսելի եղան աղօթք-
ները Յովակիմայ և Աննայի, որով շնորհուե-
ցաւ իրենց զաւակ մը՝ Տիրամայրը, որ պիտի
գտնուար փրկութեան լասար մարդկութեան:

● Եր. 23 Դեկտ. — Ս. Նիկողայոսի Սեպեկա-
գործից: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գրե-
խարէր մատրան մէջ: Ժամարարն էր Նոզշ.
Տ. Ասպետ Արդ. Պալեան: Վերաբերումը կա-
տարուեցաւ եկեղեցւոյ ներքին գաւթին մէջ
գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն:

● Կիր. 24 Դեկտ. — Բարեկեցեցան Ս. Յակոբայ
պահնց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յա-
րութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ:
Ժամարարն էր Նոզշ. Տ. Մանուէլ Արեղայ Սր-
կաթեան:

● Ար. 29 Դեկտ. — Նախատանակին ի Ս.
Յակոբ Նախագահեց Գերբշ. Տ. Կիրեղ Յպո.:

● Եր. 30 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծբնայ հայ-
րապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր
Տաճարի Ս. Գլխադիր մատրան մէջ: Ժամա-
րարն էր Նոզշ. Տ. Հայրիկ Արզ. Գալայանեան:
Վերաբերումը կատարուեցաւ եկեղեցւոյ դա-
սին մէջ՝ Սուրբին նկարով շինուած շարժա-
կան խորանին վրայէն:

● Կիր. 31 Դեկտ. — Ս. Պատարագը մա-
տուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Նոզշ.
Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

Պ Ա Ե Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 10 Սեպտ. — Երեկոյեան, Համայն
Ռուսիայ Պատրիարք Ն. Ս. Պիկէնի անունաւ
տօնին առթիւ, Ռուսաց Միաբանութեան Մե-
ծաւորի հրահրին ընդառաջելով, Գերբշ. Տ.
Կիրեղ Յպո. Գարիկեան, ընկերակցութեամբ
առժմ. Թարգման Նոզշ. Տ. Սևան Վրդ. Դա-
րիպեանի, Նոզշ. Տ. Մանուէլ Արզ. Երկաթ-
եանի և Տիար Գէորգ Հինդլեանի, ներկայ
եղաւ Russian Compoundի մէջ արուած ընդու-
նեւ Ռուսիան:

● Ար. 15 Սեպտ. — Ս. Աւետիս Միաբան
և Մարտիրոսի Նոզիւոր Նոզշ. Տ. Վալէ՛

Մ: Վրդ. Իդնատիոսեան, որ 24 Օգոստոսէն ի
վեր հիւրաբար կը գտնուէր Ս. Աթոռ, վերա-
գարծաւ ըր ՚չալտունուեղին:

● Կիր. 8 Նոյտ. — Բեթլեհէմի կէտ նամ.
բուն վրայ գտնուող Ս. Եղիա Յաւնաց վանքի
նորգործութեան աւարտման առթիւ, հոն մա-
տուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին ներ-
կայ գտնուեցաւ Լուսարարապետ Սեբշ.
Տ. Հայրիկ Արքեպո. Ասլանեան, ընկերակցու-
թեամբ Նոզշ. Տ. Հայրիկ Արզ. Գալայանեանի և
Տիար Գէորգ Հինդլեանի:

— Իոկ Նոյն առթիւ արուած ընդունելու-
թեան ներկայ գտնուեցաւ Գերբշ. Տ. Կիրեղ
Յպո. Գարիկեան, ընկերակցութեամբ Նոզշ. Տ.
Սևան Վրդ. Դարիպեանի, Նոզշ. Տ. Նուրհան
Վրդ. Միւսուկեանի և Տիար Գէորգ Հինդլեանի:

● Եշ. 12 Նոյտ. — Երեկոյեան, Սպանիոյ
աղգային տօնին առթիւ, Սպանական Ընդհ.
Հիւպատոսի հրահրին ընդառաջելով, Հիւպա-
տոսարանի անուն մէջ արուած ընդունելութեան
ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերբշ. Տ.
Հայրիկ Արքեպո., Գերբշ. Տ. Կիրեղ Յպո.,
Նոզշ. Տ. Սևան Վրդ. և Տիար Ք. Հինդլեան:

● Դշ. 18 Նոյտ. — Կէսօրէ ետք, շերէց
Սուքցթի (Տալաւարահարաց) տօնին առթիւ,
Երուսաղէմի Գաղաքապետ Վսեմ. Թէտի Բոլ-
լէքի կողմէ Դաւթի բերդին մէջ արուած ըն-
դունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս.
Պատրիարք Հայրը, Գերբշ. Տ. Տանէ Արքեպո.
Անէմեան, Նոզշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան և
Տիար Գ. Հինդլեան:

● Բշ. 30 Նոյտ. — Երեկոսան Թիւրքիոյ
աղգային տօնին առթիւ, Թրքական Ընդհ.
Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի մէջ
արուած ընդունելութեան ներկայ գտնուեցան
Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, ընկերակցու-
թեամբ Դիւանապետ Գերբշ. Տ. Տանէ Արքեպո. Իւ
— Նոյն օրը, քաղաքիս Լուսերականներու
եկեղեցւոյ հիմնադրութեան 80ամեակի առի-
թով, եկեղեցւոյ կից սրահին փէջ սարքուած
նաշիւրոյթին ներկայ գտնուեցաւ Գերբշ. Տ.
Տանէ Արքեպո. Անէմեան:

● Գշ. 31 Նոյտ. — Երեկոյեան, Լուսերա-
կաններու եկեղեցւոյ մէջ Նոյն առթիւ տեղի
ունեցած Գահարանական Պաշտամունքին և
անոր յաջորդող ընդունելութեան ներկայ
գտնուեցան Լուսարարապետ Գերբշ. Տ. Հայրիկ
Արքեպո. Ասլանեան և Աւագ Թարգման Նոզշ.
Տ. Ասպետ Արդ. Պալեան:

● Եշ. 30 Նոյմ. — Պէյրութէն հիւրաբար
Ս. Աթոռ ժամանեց Աթո. Տ. Արսէն Բհնյ. Գե-
շիլեան և վերադարձաւ շարաթ մը ետք Տէր
Հայրը 1940 Ապրիլ թուականներուն աշակեր-
տած է Ս. Աթոռոյ ժառնգ. վարժարանին:

● Եր. 2 Դեկտ. — Ամեն. Ս. Պատրիարք
Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացուած
կատարեց Լ. Օ. Մ. Տարիկեան Պաղարկի՝ Հայ
Մարմն, Ընդհ. Միութեան սրահին մէջ:

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ե Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1978 թաւաւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերուն եղած հետեւեալ բարեպատեականց նուէրները.

1. — Թեհրանէն, Տիկին Փառանձեմ Յակոբեան . Ս. Գլխադրին կը նուիրէ երկու փոքր արծաթեայ աշտանակներ :

2. — Թեհրանէն, Պր. Միքայէլեան կը նուիրէ փոքր խաչի բռնիչ մը և մէկ տպածոյ սեղանի ծածկոց :

3. — Թեհրանէն, Տիկին Նազիկ Մինասեան կը նուիրէ Աւետարանի կարմիր բռնիչ մը և կապոյտ յատակով ծածկոց մը :

4. — Թեհրանէն, Տիկին Գոհար Աբրահամեան կը նուիրէ զանազան մեծութեամբ և գոյներով խաչի բռնիչներ և Եւրոպական տպածոյ ծածկոց մը սեղանի :

5. — Թեհրանէն, քարպոպշտուռի մը կը նուիրէ սեղանի տանելագործ ծածկոց մը :

6. — Թեհրանէն, Նոր-Ջուղայիցի Լեւոն Մինասեան կը նուիրէ սեղանի տպածոյ ծածկոց մը, տպածոյ արձանագրութեամբ :

7. — Թեհրանէն, Տէր և Տիկին Իսրայէլ Համբարձեան կը նուիրեն փոքր գորգ մը (Սուլթանապատի), սև օւլ մը և կէս քիլօ խունկ :

8. — Թեհրանէն, Տէր և Տի. Հմայեակ և Մարթա Խոտատեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն յունական ոճով զոյգ մը պղնձէ սպիկզօծ բուրվառ :

9. — Թեհրանէն, Տէր և Տիկին Ռուբիկ և Շնորհիկ Շանազարեաններ կը նուիրեն քորի վրայ իւղաներկ շխաշխութեանց պատկեր մը :

10. — Թեհրանէն, Նարթման Յովհաննէսեան կը նուիրէ Հայաստանի կապոյտ և սև կերպասէ շինուած ծածկոց մը և Աւետարանի բռնիչ մը :

11. — Վանքարանկ Տիկին Կիւլիանէ Ալիքսանեան, Մայր Տաճարի Աւագ Խորանին կը նուիրէ ինքնաձեւագործ գեղեցիկ բուրվառ մը :

ՀԼՅՐԻԿ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ
ԼՈՒՍԱՐԴԱՐԱԿԵՍ Ս. ԱՐՈՈՅ

● Գշ. 12 Դեկտ. — Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարեկեան ներկայ եղաւ Իսրայէլի Նախկին վարչապետ Տիկին Կուտա Մայրի յաշարկաւարութեան :

● Գշ. 26 Դեկտ. — Եւրոպացոց Ս. Ծնունդեան օտօնի առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլխի Միաբանութեան, Հնորուարական այցելութիւն տուաւ Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթատին և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին : Ապա, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի, այցելեց Պապական Գերշ. Նուիրակին և Անկիլքան Գերշ. Արքեպիսկոպոսին : Իսկ Հոգշ. Տ. Անուշաւան Վրթ. Ձլլանեան, վարդապետ Հայրեան ևս, այցելեց Կաթոլիկ և Բողոքական

փոքր յարանուանութեանց Մեծաւորներուն :

● Եշ. 28 Դեկտ. — Մօտալուս Նոր Տարւոյ առթիւ, Իսրայէլի Նախագահ Իցնաք Նավօնի կողմէ, Նախագահական Ապարանքին մէջ, Քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետեւ ունենալով Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ և Գերշ. Տ. Կիրեղ Սրբազանները :

— Ծրեկոյան, Հրեական Իսնուկայի և Քրիստոնէական Ս. Ծնունդի օտօնեան առթիւ, Քաղաքապետ Թէտի Բօլլէքի կողմէ, Քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Կիրեղ Եպս., Մաշ. Տ. Հայրիկ Արքեպ. և Տիար Գ. Հինդիկեան :